Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:*

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Մասնաճյուղի առաքելությունը նրա ռազմավարական պլանավորման անբաժանելի մասն է և նա իր ռազմավարությունը ծրագրում է առաքելությամբ նախանշված նպատակներին հասնելու համար: Մասնաճյուղը խթանում է իր ուսանողների ու դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը, նպաստում հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Համաձայն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության (կետ 1) մասնաճյուղը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի առանձին ստորաբաժանում է, որի գործունեությունը նպատակաուղղված է տարածաշրջանում հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների ու տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:

Տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատության՝ ԵՊՀ ԻՄ-ի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է, ինչն ամրագրված է նրա 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (19.02.2016թ.), իսկ ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցով նախանշված են այդ նպատակներին հասնելու գործողություններն ու դրանց կատարման ժամկետները: Մասնավորապես, նախանշված 9 նպատակների իրականացման համար մասնաճյուղը պլանավորել էր լուծել երկու տասնյակից ավել խնդիրներ, որոնք նպատակաուղղված են մասնաճյուղում որակյալ կրթության ապահովմանը, արդիական հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավմանը և ծառայությունների զարգացմանը, մարդկային որակյալ ռեսուրսների կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, միջազգայնացմանն ու գործակցությանը:

Իր առաքելությանը համահունչ մասնաճյուղը վերջին 5 տարիներին հիմնականում իրականացնում է ՈԱՇ-ի 6-րդ մակարդակի բնութագրիչներին համապատասխան կոմպետենցիաներ ձևավորող կրթական ծրագրեր, որոնք ըստ ռազմավարական պլանավորման նաև վերանայվել են ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան (***ՌԾ, խնդիր 1.1***):

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Մասնաճյուղն իր ռազմավարությամբ պլանավորել և իրականացնում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանն ուղղված գործունեություն: Դրանք հստակ արտացոլված են հիմնական ծրագրային փաստաթղթում: Մասնաճյուղն իր շահակիցներին առաջարկում է համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող, որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր, որոնց ստեղծման գործընթացում ներգրավվում են նաև արտաքին շահակիցներ, պլանավորել և իրականացնում է դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավման ուղղված գործողություններ (**Նպատակ 1. Որակյալ կրթություն/էջ 4, Նպատակ 7. Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն/էջ 20**), ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար վարում է բարձրորակ և գիտահետազոտական ակտիվ գործունեությամբ զբաղվող դասախոսական կազմ ընտրելու քաղաքականություն, ուսումնական գործընթացում ներգրավում է իրենց ոլորտի բարձրակարգ մասնագետներ տարբեր կազմակերպություններից (**Նպատակ 2.Արդիական հետազոտություն և նորարարություն/էջ 8, Նպատակ 4. Մարդկային որակյալ ռեսուրսներ/էջ 13**), ձևավորում է կրթական ծրագրերի իրականացման պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ և պարբերաբար դրանք զարգացնում է շահակիցների պահանջներին ու պահանջմունքներին համապատասխան (**Նպատակ 5.Որակյալ ենթակառուցվածքներ/էջ 16**), իրականացնում է մասնաճյուղի արդյունավետ, թափանցիկ կառավարում՝ արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությամբ և ապահովում է ֆինանսական կայունություն (**Նպատակ 8/էջ 23**):

Իր գործունեությունը մասնաճյուղն իրականացնում է հանրային ներգրավմամբ (**Նպատակ 3/էջ 11**), համագործակցում է տարածաշրջանի տարբեր ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ, տարբեր մեխանիզմներով (հարցումներ, հանդիպումներ, քննարկումներ, հաշվետվություններ, գիտաժողովներ, հյուրընկալություններ և այլն) պարբերաբար ուսումնասիրում է իր ներքին և արտաքին շահակիցների կարիքները, նրանց բավարարվածությունը մասնաճյուղի գործունեությունից և տրամադրած կրթությունից, կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից, ուսումնառության ռեսուրսներից, օժանդակ ծառայություններից, համալսարանական միջավայրից, վեր է հանում նրանց կարիքները և յուրաքանչյուր տարվա իր գործունեությունը պլանավորում ռազմավարական ծրագրի դրույթներին և ընթացիկ առաջացած խնդիրներին համապատասխան:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահատում է համապատասխան ցուցանիշների, կատարողականի զեկույցների, գործունեության հաշվետվությունների և վերլուծությունների միջոցով:

Ռազմավարական ծրագրով պլանավորված խնդիրների իրականացման ու մասնաճյուղի առաջընթացի վերահսկման և գնահատման նպատակով մասնաճյուղում 2009 թվականից կազմվում և հրատարակվում է ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը: ԳԱՑ-ը ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները կոնկրետ, պարզ և հաշվելի չափելու և վերլուծելու գործիք է: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումը առավել արդյունավետ կազմակերպելու համար: Մասնաճյուղը յուրաքանչյուր ուսումնական

տարվա ավարտին իր աշխատակիցներին և հանրությանն է ներկայացնում վերջին 5 տարիների ցուցանիշները, դրանց վերլուծությունները և ապահովում նրա հրապարակայնությունը (ԳԱՑ 2014-2019թթ.):

Արդյունքների գնահատման և բարելավման հաստատված գործիք է մասնաճյուղի բոլոր կառուցվածքային միավորների ռազմավարական պլանից բխող գործունեության **պլանավորումը** և դրա կատարողականի վերաբերյալ **հաշվետվությունները**, որոնք ստորաբաժանումների ղեկավարները ուսումնական տարվա վերջում ներկայացնում են մասնճյուղի գիտական խորհրդում, տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական կայքի իրենց էջերում (Օրինակ՝ ՄԿՈԱ բաժին, ՏԳՖ): ԵՊՀ ԻՄ տնօրենը մասնաճյուղի տարեկան գործունեությունը ներկայացնում է Մասնաճյուղի գիտական խորհրդում (**28.12.2019թ.**) և ԵՊՀ-ի գիտական խորհրդում, հրապարակվում են ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում:

Արդյունքների գնահատման և բարելավման հաստատված գործիք է նաև մասնաճյուղի ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ զեկույցների պատրաստումը: 2016-2020թթ. ծրագրի կատարողականի վերաբերյալ կազմվել է երկու զեկույց (2016-17 ուստարվա և 2018-19 ուստարվա համար): Այդ զեկույցները հնարավորություն են տալիս գնահատել մասնաճյուղում ընթացիկ ռազմավարական նպատակների իրականացման կատարողականը, արձանագրել ձեռքբերումներն ու բացթողումները բոլոր ոլորտներում, մատնանշել նոր հեռանկարային նպատակները և խնդիրները՝ հաջորդ ռազմավարական ծրագրում ներառելու համար:

Հաջորդ հաստատված և արդյունավետ գործիքը դա մասնաճյուղում կանոնակարգված իրականացվող տարբեր հարցումներն են, որոնց միջոցով ուսումնասիրվում է ներքին և արտաքին շահակիցների բավարավածությունը, նրանց կարիքները, խնդիրները: Դրանց միջոցով հավաքագրված տվյալները և դրանց վերլուծությունները նույնպես հնարավորություն են տալիս գնահատել ձեռքբերումները և բացթողումները, իսկ շահակիցների արդյունավետ առաջարկներն օգտագործվում են գործընթացների բարելավման համար նոր ծրագրերի մշակման, ընթացիկ պլանավորման ժամանակ:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. ՈԱՇ-ին համահունչ հստակ ձևակերպված առաքելության առկայություն: 2. Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի առկայություն: 3. Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտությունների առկայություն: 4. Ռազմավարական ծրագրի գնահատման և վերանայման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածություն: 5. Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու մեխանիզմների և գործիքների առկայություն: 6. Ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվողականության առկայություն:	1. Տարածաշրջանի աշխատաշուկան որակյալ մասնագետներով ապահովելու գործում մասնաճյուղի գերակշռող դերը: 2. Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը: 3. Արտաքին ֆինանսական նոր աղբյուրները:
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**
1.Տարածաշրջանի կազմակերպությունների հետ Մասնաճյուղի թույլ համագործակցություն:	1.Տարածաշրջանում մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող նույնատիպ այլ մուտքերի բացակայություն:

2. Հետազոտական ոլորտում ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ լաբորատորիաների թույլ հագեցվածություն:	2. Աշխատաշուկայի պահաջարկի հաճախակի փոփոխություն: 3. Գործազրկության բարձր մակարդակ և տարածաշրջանում կադրերի գերհագեցվածություն:

Օգտվելով ներքին ուժեղ կողմերից և արտաքին հնարավորություններից ու հաշվի առնելով արտաքին վտանգները՝ մասնաճյուղը վարում է այնպիսի քաղաքականություն, որը նրան թույլ կտա պահպանել ուժեղ կողմերը, նվազեցնել թույլ կողմերը:

Մասնաճյուղը նախատեսում է ստեղծել նոր կապեր և ակտիվացնել գործող կապերը տարածաշրջանի արտաքին շահակիցների հետ, ըստ ՌԾ-ի կատարողականի բացթողումները տեղափոխել հաջորդ ռազմավարական ծրագիր՝ խնդիրների վերհանմանը և ծրագրի մշակմանը մասնակից դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին: